

Արտարժույթով հաշվի նպատակը

Էյչ-Էս-Բի-Սի Բանկի արտարժույթային հաշվի միջոցով Ղուք կարող եք հեշտությամբ կառավարել Ձեր միջոցները: Հաշիվները նախատեսված են Ինտերնետային, Սոբայլ և 24/7 ռեժիմով աշխատող Հեռախոսային բանկային համակարգի միջոցով արտարժույթի հետ կապված Ձեր կարիքները հոգալու համար, աշխարհի որ կետում էլ լինեք: Ցանկության դեպքում, Ղուք կարող եք փոխարկել Ձեր գումարը ցանկացած այլ արժույթի, հաշվի արժույթի համար տվյալ պահին կիրառելի փոխարժեքով:

Արտարժույթով հաշիվը հարմար է.

- ՀՀ և արտերկիր արտարժույթով փոխանցումներ կատարելիս, կամ համապատասխանաբար ստանալիս
- Աջակցելու Ձեր սերտ կապերը արտերկրի հետ
- Երբ Ձեր երեխաները արտերկրում են սովորում
- Անշարժ գույք գնելիս կամ վաճառելիս, երբ գումարն կամ արտերկրից եք փոխանցել, կամ պետք է փոխանցեք
- Արտերկրից ավտոմեքենա ներկրելու համար
- Արտերկիր Ձեր հարազատներին գումարային նվեր ուղարկելիս
- Ձեր խնայողությունները տնտեսապես ավելի կայուն և ցանկալի արժույթով պահելու համար

Կարևոր նշում. ՀՀ դրամից բացի ցանկացած այլ արժույթով բանկային հաշիվն ենթադրում է արտարժույթային ռիսկ կապված փոխարժեքի տատանումների հետ: Մասնավորապես, տվյալ արտարժույթի տատանումների դեպքում ՀՀ դրամով Ձեր գումարի համարժեքը կարող է փոփոխվել:

Թարմացվել է՝ 18/01/2019 15:00